

Հ. ԲՈՒՍԱԲԱՌՈՒԹԻՒՆ

2870. Վարդ. Վարդենի.

Հասարակօրէն ծաղկանց գերազոյնն և թագաւորն նանցուած, իսկ այն լեզուաց մէջ որք բառից սեռ ունին՝ թագուհի. մեր լեզուի մէջ յայտ է արական և արքայական ըլլալն, Վարդ, Վարդան, Վարդեւան, Վարդանասար, Վարդուկ, Վարդոյ անուակը (1), որոց քոյրերն այլ պէտք է ըլլային Վարդուհի, Վարդենի, Վժիթանոյշ, եւ այլն: Եթէ ոչ ամեն բանաստեղծ՝ գոնէ պմենայն ազգաց բանաստեղծք՝ օգաչուք և գետնակոխք (աւսիկք) երգած են զՎարդ. անոնցմէ վեր՝ ազգային աւանդութիւնք կրօնական և դիցական յիշատակք պատուեր և արբեր կամ պղծեր են զայն. և մինչ Ոլիմպոսի պաշտօնեայք իրենց Ափրոդիտեայ օտից արևունէն ծաղկեցուցեր են զՎարդ, Այրարատեան Մասեաց պաշտողք այլ իրենց Վարդապայից մէջ Անահիտ դիցամօր, Թերեւս յառաջ քան զՀռմբրոս՝ ընծայած են Վարդաւատե թաթեր, Արշալուսոյ գոները բանալու համար. և փոխանակ անոնց Վարդապատկ Բագոսի՝ խորհրդապատ Վարդգէս մ'երեւան հաներ են, դեռ քննելի բանասիրաց. և մինչ Ս. Գրոց մէջ անպամ Յ. անգիրն կ'ըսէ, Երբ արեւն ծագելու կամ բացուելու վրայ էր, Հայ թարգմանիչն չի կրնար զսպել գրիչը որ շթարգմանէ միանգամայն իր երեւակայութիւնն այլ, « Այն » ինչ Վարդազդէն ծայրակարմիր արեգակն ընդ երկիր ծաւալել կամէր »: մեր շնորհալի Եղիշէն՝ (որ կարծես երբ թարգմանիչ այս Մակաբայեցոց գրոց) մինչեւ ի Բաղիշեցին Կարապետ՝ որ երգեր է.

« Պլպուլն ի յտքն է հագեր կօշիկ.

Սիրով կու փնտռէ զՎարդն անուիրկ »:

ոչ պակասած և ոչ դադրած են վարդերգութ. ինչպէս և ոչ օտար ազգաց մէջ. ինչպէս և ոչ Սողոմոնի՝ իր հարսերն երգելէն և իր երիտասարդաց ըսել տալէն, Թէ « Բոլորիւք վարդից պսակեցուք », մինչեւ այս օր՝ ամեն ուրախական տօնից և յիշատակաց մէջ՝ Վարդն գրեթէ միշտ առաջին տեղը կու բռնէ. եկեղեցեաց և արքունեաց տաճարներէն մինչեւ ի հովուաց և մշակաց խրճիթները, ուր որ սեր ծագէ, և ուր նա եւ սուգ մարէ. վասն զի տխրութեան և մահուան յիշատակաց այլ հաղորդի Վարդ, և ոչ պակաս քան զառաջատու հարսանեաց, գուցէ և աւելի՝ պսակէ և զգերեզմանս. մանաւանդ երբ ասոնց քով տնկուի իբրեւ տարաւժամ սգաւոր, և հայելի՝ հողուն մէջ քնացող հարսին և կուսին, սնոր հասակներն ու պսակները կերպարանելով իր յալօրդաբար փոփոխութեամբն՝ ըստ եղանակաց տարւոյ, երբեմն չոր երբեմն դալար, մէկ մի ծաղկած մէկ մի թուամած, և յիշցնելով գերդողին ըսածն այնպիսեաց համար,

« Վարդ էր, վարդի չափ ապրեցաւ.

Երեկ ծաղկէր, այսօր անցաւ »:

1. Մեր միջին դարուց Վարդապետաց մէկն այլ պապէս կ'ըսէ, ծաղկանց սեռի վրայոք դրելով.
« Վարդէ՛ թագու՛մ քանից խաղացմունս առնու, վասն արական զաղոյ, որպէս ոք զի ասէ, Վարդէ՛կ,
« Վարդու՛կ. Վարդերես, Վարդան, Վարդահեր. բայց Մանուշակն՝ ոչ շարժի (շարժմամբ), այլ
« միշտ նոյնպէս անսանի. . . դի » ի ծաղկա՛ Վարդ արական ասի. և Մանուշակն էդ », եւ այլն:

Բայց եթէ հասարակաց համար է վարդին կենաց և մահու նշանակութիւնն, եղբինս՝ իր կարճ դիմանալուն համար, առջինն իր գեղեցիկ ձեւով, գեղեցկագոյն գունով, ամենագեղեցիկ հոտովն, կըրնայ Հայն բաղդաւոր համարուիլ՝ անոր յատուկ կիրառով անմահութեան և գերագոյն երանկութեան նշանակ տալով, որ իր եկեղեցւոյն սեփական պարծանք և հրճուանք է. որովհետեւ յիշեցնէ և ըստ կարեւորոյն ցուցնէ զՅաւիտենականն, որ մարդկային կենօք պարկերտ և անշուք ապրելով յերկրի, օր մի միայն՝ Ժամ մի միայն՝ երեւցաւ սքանչելապայծառ.՝ լերան մի վրայ. Այլակերպութեան օրը. զոր ամենայն քրիստոնեայք տեսնէ կամ յիշատակեն, Բայց Հայն է՝ որ վարդապետ կոչէ, և ամենայն հեթանոսական վարդերն ու զարդերն՝ իր կենարարին փառաւորութեան նուիրեալ՝ սուրբ պահէ։ — Չմեղադրի՛ք ուրեմն իթէ՛ վարդն զմեզ յափշտակեց և բարձրացուց ի սուրբ լերինս, և ի վեր եւս՝ յերկինս։ Ապա թէ հարկ է իջնել յերկիր և ի սովորական ոճ մեր՝ յիշեմք մեր Ամասիացի առաջնորդին հետ, որ այս ծաղկանս Ար. անունն այլ նոյն է ընդ. մերոյս, և վարտ. Օյջ. և ինքն շատ ցեղ է. և լաւն այն է որ առ նաւահոտ և կարմիր լինի... չորացընող է և ուժովցընող է. և իր հոտն օգտէ » տաք զխաղաւութեան. և ջուրն օգտէ ակռային, և ակընջին ցաւուն որ ի տա- » քութենէն լինի՝ տանի, և հոնտն օգտէ բերնին խոցերուն... և իր ձէթն օգտէ » բլտին խոցին... և փորին... Ասէ Պտ. Թէ Արարն Ճոյզ կու առէ և Պ. Էրոյ » կու առէ. և ամենայն ծաղկի՝ վարդ կու ասեն. և կարմիր վարդին վատսար » կու ասեն... և այն որ պլլուկն է՝ հոտն ուժով է քան զբացուածն, և առ » ղէկն խիստ կարմիր է. և ասացած է թէ դաւարն լուծումն կու առնէ ու... Եթէ վարդին յատկութեանց, տեսական և օգտից վրայ չափաւոր այլ գրել հարկ ըլլար, դարձեալ երկայն բան կ'ըլլար. վասն զի որչափ որ հաշակեալ է առաջ յիշած յատկութեանցն կամ գեղեցկութեանն համար, աւելի կըրնայ հաշակուած ըսուիլ օգտից համար, մանաւանդ յարեւելս, ուր՝ բժշկաց յիշեալ դարմաններէն զատ՝ ի գործ ածուին, վարդի լոշոն (կիւլապ), վարդի ֆաշախն, վարդի Էյն և վարդի Սնոյն (կիւլալէշէբ), վարդի մեղոն (կիւլէնկիւպին), Այսպիսի պիտանի և զովանի բոյսն՝ ի հարկէ այլ արժանաւոր խնամք պահանջէ դարմանեւելու համար, և այս այլ երկար գրուածոյ կարօտի. մենք յիշեմք մեր վաստկ. գրոց ըսածը (Գլոս) մասնաւոր քանի մի բանի համար. « Եթէ ուզես որ կանուխ վարդ » տանուս, փորեալ զլորջն տակուցն արձակ՝ թիզ մի, և եղկ լրով արբոյ յորն » երկու հետ, մենայն վարդ տայ. և թէ ուզես որ շատացուցանես, պառակեցո » ի ճղերոյն և հող ալ ի վերայ. ծլէ և շատանայ, եթէ յամէն տարի դաճն » պառակեցընեսու՝ Եւ այլ ազգ, ի շարժն՝ կտրեալ ի ճղերոյն և սատրեալ՝ որ մազ » մզուկ առնու, և ապա հոն տնկեալ ուր կամիս, և այսու շատացո քանի կա- » միս, բայց զգետինն աղէկ պարտ է չինել. և այս օրինակաւ վարդն անուշահոտ » լինի. — Ի թէ՛ֆնէն (Գափինի) վարդ պատրուածա, տերեւականալ վարդ լինի » — Այս ետքի խօսքս թերեւս նորաւոր ըլլայ՝ վարդի կանաչութեան նկատմամբ, բայց կու յիշեցընէ մեր մէկ վարդապետի գրածն այլ. « վարդն ունի չորս ե- » րանք գունոյ. այսինքն կանանչ և կարմիր, Սպիտակ և Դեղին... վարդն հինգ » պատենօք պահպանի... Բժիշկ է սրտի վարդն » (Բաւական է որ փուշն շատ մատ ըլլայ)։

Փալով վարդի տեսակոյց, եթէ մեր բժշկապետն շատ ցեղ է ըսաւ, մենք կըրնա՛նք անթիւ ըսել, որովհետեւ խնամքով և արուեստով տարուէ տարի կ'աւելնան տեսակքն. մեր ծաղկերգիչն այլ ըսած էր, « Երամն ծանր է վարդենոյն »։ այսինքն իրատ շատ տեսակ ունի. յորոց ինքն յիշէ զհասարակ « վարդն ու Գոռ- » վարդն և Հագրեմարդ ու։ Այս ետքինս յիշած եմք, Թ. 1883, նոյնպէս և զԳոռար վարդ, Թ. 810. յիշեմք և զՔափոշ (Քեռաֆիր) վարդ, որ յիշուի Մշոյ և Խնուսոյ կողմերում, « մանաւանդ ի Խամլըբերդ լեռան Խնուսոյ, կ'ըսէ այդ

ն կողմանց ստորագրողն բոյս սորա ցածուն, ծաղիկն մեծ քան զվարդ (հա-
սարակ), անուշահոտ և առանել գեղեցիկ կարմրագոյն, որոյ և տերեւ իսկ ունի
« գոյն զարմանայի » — Գիշահոտ վարդ. տես Սնդուն և Մեթին: — վանայ վարդ.
Թ. վան կիշի, սպիտակ ծաղկով: — Հարիւրալամ. զայս այլ յիշած եմք ի
կարգին. բուսարանք այլ յիշեն Հարիւրերթեան վարդ մի, *R. Centifolia*, և տե-
սեր են յէջմածին, ինչպէս նա և Բիւրաբերք Բիւրածաղիկ մի, *Myriacantha*, ի
Վոզ, վարածնունդ, Քորդահայք: — Կան ուրիշ պէսպէս մականուամբք վարդ
կոչուածներ այլ, բոյց տարբեր ցեղէ կամ ազգէ ծաղկներ են, զորս յիշմք
քիչ մի վերջը. իսկ բուն վարդի ազգէն՝ ուսումնական անուամբք ճանչցուած
տեսակներն ի Հայս, են. նախ, յատուկ Հայկական՝ *R. Armena* (1), որ Սրեւե-
լեան (*R. Orientalis*) և Բյրոտ (*R. TormENTOSA*) կոչուած տեսակաց մերձաւոր
է նմանութեամբ, և տեսնուած է ի Բաբերդ. իսկ այդ յիշալ երկու տեսակաց
վերջինն ի Պոնտոս, ի Պրիտ լ. Կիլիկիոյ. առջինն՝ յԱլան տաղ լ. Փ. Հայոց.
— *R. Lutea*, ի Բաբերդ, Մարաշ. Սինթապ. — *R. Rapiui*, յԵգնկա. — *R. Pim-*
pinellifolia, ի Մասիս, Բաբերդ, Թորթում. — *R. Gallica* և *Cinnamomea*, ի
Թ-Հ. — *R. Glutinosa*, (կաշուկ) յԿրասիայ Հովտի, Կարին, Պրիտ և ձիմի լ.
— *R. Caucasica*, ի Ելմածին, Պարսար լ. Տաուշ. — *R. Saxatilis* ի վա-
րածնունդ. — *R. Alba*, (կաշտակ) ի Քուխայիս. — *R. Microcarpa*, ի ձիմի.
R. Canina, ի Մարաշ, Սինթապ. — *R. Rubiginosa*, ի Թէքտաղ լ. — *R. Cre-*
nata Kotschyana ի Մուշ. — *R. Ulmaria* ի Կարին, ձիմի. — *R. Filipendula* ի
Բաբերդ. — *R. Aruncus* ի ձիմի, Հր. Կովկաս. — *R. Vanheureckiana* ի Մուշ,
Եւային: — Ասոնց՝ Թէ ուրիշ տեսակի պատշանի, չեմ գիտեր, քիշիշ կոչուած՝
վարդն ի Բաղէշ:

2888. վարունգ.

Ոչ միայն ծանօթ է իր նման մոտ խաւարտից հետ, այլ իրեւ երեւի անոնց
մէջ՝ իրեն սեփականած է խաւարտ կոչումն, ըստ Ամիրտ. որ կ'ըսէ, « Խիար (ըստ
» Ար. Թ. ریحان) որ է Հ. բառով խաղաարտն. լաւն այն է որ կուտն մանր լինի.
» քնութիւնն հով է և գէճ գ տրճ. և ինքն հովացընող և գիճացընող է. և իր ջուրն
» օգտէ սարամին և տաք ուռեցին և տն գլուխցաւութեան՝ որ ի տաքութենէ լինի. և
» Թէ զլուրն ի քիթն կաթեցընեն՝ զարունն կտրէ... և ի յինքն քիչ մի կապողու-
» Թիւն կայ. և Թէ զիր հնտին զկաթն հանեն և տաս՝ զծարաւն կտրէ. և օգտէ ա-
» մենայն տաք ջերմութուն. և իր փոխան Ենկիարն է. և Թէ շատ ուտես՝ զին առնէ », և
և այլն: — վաստկ. գիրքն սաանձին դրէ (ԾԱՅ) « վասն Խիարի. Խիարին տնկելն
» և ստորեն՝ նոյնպէս է որպէս այլոյց (քան յարեղինաց), և Թէ որ զիւր տերեւն
» ծեծէ և զլոյզըրդայն լնդ իրեար, և ի վերայ նոր կտրածի դնէ, զարիւնն կապէ և

4. Հայկական վարդին (*Rosa Armena*), նկարագիրն և բուսաբանից լիզուաւ. *Aculeis ad-
ramis annotinis a basi rotundata subulatis rectiusculis aliis intermixtis et ad ramulos
juniores gracilibus setaceis, stipulis omnibus conformibus angustis eglandulosis, peti-
olis aculeolatis, folios 5-7 elliptico-oblongis obtusis simpliciter serratis utrinque
dense cinereo - tomentosis, floribus solitariis brevissime pedunculatis, petalis... Fructu
erecto sphaerico-depresso breviter setuloso laciniis calycinis rectis subindivisis in
caudam subdilatatam abeuntibus superato. ... Foliorum formā refert R. Cinnamomeam, sed hæc habet folia subtus tenuissime pubescentia, stipulis florales valde
dilatatas, tubum calycinum glaberrimum et insuper aculeis geminatis, longe differt
R. Armena a speciebus R. Orientali et Tomentosæ affinibus ovaris sessilibus distat;
et ex sententia cl. Godet et Crepin prope R. involutam Sm. quæ tamen aculeos cras-
siores habet probab. collocanda est. — An humilis vel elata sit, ignotum. — BOISSIER,
Flora Orientalis, II. p. 874. Շատ հոտու պէտք է ըլլալ հասկանալու համար:*

» զիսոցն կնքէ, և ուռեց չտայ առնել. և թէ գիր տերեւն ծեծես և ընդ անլի հին
 » խողտի խառնես և ի վերայ փշի կամ խոշի դնես՝ որ ի մարդն կենայ. հանէ. և
 » թէ ճիւղած կամ արորած կենայ ի մարմինն՝ արբէ և լաւացուցանէ ։ Լին
 » Բժշկը. մեր ընդ կօպայի բաղգատելով զՎարունգ՝ գրէ. « Խիար և Կօղա՝ հով են.
 » յ'ր տրն. և գէճ յ'տըն, և Խիար՝ հով է քան զԿօղա, և ի ստամոք ընծայէ թանձր
 » և դօրկուտ պլղամ. և արծառն է պատրաստել ու շուտել, Թող զմանն ուտէ և
 » զմանորկուտն. Կօղա՝ լաւ է քան զԽիար, որ զԽիար շատ ուտէ՝ Զերմնոտի, քաց
 » որ ի տաքէն վաղկտի՝ հոտն լաւ է. և որ շատ ուտէ և պատրաստի՝ Նանախուտ
 » ծամէ ի հեա, և զկեղեւն մի ուտեր, ահոկէ ։ — Նախայիշեալ Վարունգի վերա-
 » դասուելուն ի խաւարտա՝ վկայէ և ինքն, ըստ իմացողութեան Աւակախօսի մերոյ.
 » (ԾԹ). « Վարունգն կոչեցեալ պտուղ պարտիգի՝ մեծարդոյ քան զայլսն կարծէր քան.
 » « Զնէ վառն կանխութեանն, և ի Ախիէ սողտեալ՝ եթէ պատուիս զի մերձ ոչ
 » իցեմ, և եթէ ոչ այնպէս սակայն անպատուիս՝ դեղնութեամբ գարշելի եղեալ ։ »
 — Լ. Cucumis. ֆ. Concombre, Բ. Огурец .

2889. — Վարունգ Վայրի.

Արժուարար Խիարունկ կոչուի, այլ և Վայրի Խիարունկ ի Վաստկ. գիրս, որ ար-
 տորէից այլեւայլ շնատուց գեղ գրէ այսոր տերեւներով կամ ցօղունով, ինչպէս
 (ՂԶ) այգիներու շուրի, (ՃԲ) մարախի, և խառն Թրմզգի իրով ցանել բուսող վրայ.
 (ՃԶ) Լուի գեղ. « Առ Վայրի Խիարունկն և ծեծես իրով, ի տունն ցանես, լուն սա-
 » տակի առ հասարակ ։ — (ՃԹ) Մկները տատկեցընելու համար՝ այսոր տակն ու
 Անգուժատ ձիթով խառնել. — Իարձեալ (ԾԿՐ), « Թէ զՎայրի Խիարկին ջուրն
 » որ առնու և օծանի, և երթայ մեղր կթէ, մեղու գինքն չկարէ խայթել. և գնոյն
 » Խիարկիւղ ջուրն և հոռած՝ ձէթ ընդ իրեար խառնեն, զկտրած ուրուք օծանես՝
 » յառաջ որ այլ իրք լինի օծած՝ զկտրածն կցէ. և թէ գնոյն Խիարունկն ծեծես և ի
 » վերայ խայթածի դնես, զինչ և իցէ՝ ամէնին օգտէ ։ »

2918. Տանձ. Տանձենի.

Ընտրելագոյն պտղոց մէկ ազգն, ինչպէս յայտնի է, թէ համոյն թէ անշնատու-
 Թեամբ և թէ շատ տեսակներով, ինչպէս կ'ըսէ և Ամիրտ. ստորագրելով. Ար-
 ֆուսասրայ عنبک անուամբ .

« Շատ ցեղ լինի ինքն. և լաւն
 » այն է որ մեծ և քաղցր լինի,
 » մուգթատիլ է և կապող՝ է. և
 » թէ ի կերակրէն յետեւ ուտեն՝
 » չթողու որ պուխարն ի զլուխն ե..
 » լանէ.. և թէ գտերեւն եփեն և
 » զջուրն խմեն՝ օգտէ արուն թքնե..
 » լուն և թորին կերվածին.. և
 » զսիրտն ուժովընէ... և կուտզ,
 » զճիճին և զօճն կու պաննէ...
 » Աւէ Պա. Թէ լաւ Տանձն այն է
 » որ ի Խորասան լինի՝ որ Շահ..
 » Մրոտտ կ'առնեն, և ինքն ի Փռու..
 » տայիւն ? Յոյսն կու նմանի ի
 » հօտն, և համն անուշ, եւ
 » մեծ լինի և հասուն.. և քան
 » զամէն միրգ աղէկ է կերակուրն..
 » և այն որ Թթու է՝ զփորն կու կապէ. և թէ չորցընեն՝ ստամոքին աղէկ է. և



Տանձի ծաղիկ.

» զծարաւն կու կտրէ. և (Թէ) զՏաննն հետ Մանթարի եփեն՝ զշարութիւնն
» տանի. . . Եւ ասցած են Թէ չէ պատեհ որ ի վերայ Տաննին լուր խմեն, և Թէ անօ.
» Թուց խմեն զլուրն՝ պիտի որ ի քուն յինին և անապակ զինի խմեն, օգտին... և
» ամենայն դիմօք Տաննին լուրն լուծումն կու առնէ, և ինքն կապող է ու — շին
» Բժշկը. այլ կ'ըսէ. « Տանն. շատ ցեղեր է, է որ Թթու է զէդ ինձոր, և շոյտ զնայ
» ի ստամոքէ, և է որ ստիպ, այն հով է ու ծանր. և է որ քաղցր, այն ընդ Թթու և
» ընդ ստիպն ի մէջ է, ի տաքն մտ է քան ի հով. իսկ որ Թթուն է՝ զփորն կապէ.
» եւս, Թէ քաղցուլ եփած՝ տառ ուտել. և չիրն ծանր է քան զգալար. և մեծ Տաննն
» լաւ է քան զգորգըն »:

Ինչպէս կու վայլէր, Վստկ. գիրքն առանձին գրէ (ԾԻՐ), « Յաղաքս Տաննի.
» Տաննն՝ զգիջային վայրսն ընդունի. և ինչ ցեղ որ ինքն շատ ազգեր է՝ և իւր տըն.
» կնիւ և սերմանելն բազում ազգ են, և իւր տնկելն պիտի յառաջ քան զանաւն
» միջի ամիսն, յայնպիսի տեղիս՝ ուր արեւելքի հողմն և հարաւայն՝ հանապազ որ.
» քան շարժին՝ դիպին յինքն և անուցանեն... Եւ երբ տնկես՝ աղբախաւն հող ան
» ի վերայ, բայց լաւն մաղձղկոտն է՝ Թէ գտանես. նոյնպէս և պատրոյսն անսղալ է
» և բերուիկ և շոյտ: Եւ Թէ ուզես որ Տաննն քաղցր զայ և շատ, նա դու որպէս
» գրեալ ենք՝ ծակես զծառին բազուկն վերեւ կողայն, և կաղնի ցից զարկ խալք
» պիտն վառվ՝ որքան կարես, և Թող ի տեղն, դեղն այդ է. Եւ Թէ յիմեքէ պատ.
» ճառէ Թափէ զծաղիկն կամ զբերն, առ գրինեմուր և փորես զտակուն ծառին և
» լից ի վերայ տակուցն 15 գիշեր ի վերայ իրերաց. և այդ է դեղն, և զինչ ցեղ և
» իցէ ծառն և զմուրդ ընու, զՏաննն քաղցրացուցանէ: Եւ Թէ առնուս զպախրէի
» լեղին և բոլոր զծառին հաստ տակախին բանաս և օծանես՝ այլ ճիճի չի բնակի, և
» ողջանայ. և Թէ փորես՝ զքարինսն ի ծառին տակուցն հանես, և մաղած աղբահող
» ածես ի տակուն և ծածկես, Տաննն քար չունենայ, և լրով ինի և անոյշ. բայց ի
» վերայ աղէկ չրես ու — Լ. Pyrus, Թ. Poire, Մ'եր յիշալ ազգային երկու հեղի.
» նակաց կամ զրոց վկայութիւնն Տաննից շատ ազգ ըլլալուն՝ ինքնին հաւանեցընէ որ
» մեր երկրին մէջ այլ պիտի ըլլային այդպիսիք. օտարք յիշեն Աօրուոց անուանեալն
» P. Syriaca ի Բագէշ, և Փշատատեբրուն՝ P. Elæagrisfolia ի Պինկէօլ և ի Կեսարիա.
» իսկ առ մեզ ի գրոց և ի լրոյ ճանչցուած տեսակք են:

Ախարթ կամ Ախարթ (Վայրի Տանն). Մեղրիկ, Մեղրիկենի (շատ անոյշ Տանն).
Ամբասիկ (միկահոտ Տանն). Մոխրի կամ Մուխրի Տանն.

Անկենիկ. Մեհրանիկ.

Լղմար կամ Լղպոր (Թ. Պողազալան). Նռնիկ (մէկ երեսն կարմիր).

Լսեակէն, Թ. (Տէկիրմէն արմուտի). Շթուկ, վայրի և Թթուալ, ի Տարօն.

Խոդի Տանն (Աղբաղէս ? ըստ Գալիեն). Շիկոռ, նոյնպէս վայրի, ի Խոտուշուր.

Մտի Տանն. լառից). Պակոյ.

Ղղուիթ. Սարի Տանն, անունն յայտնէ վայրի ըլլալը.

Համէլտանն (ի Համէլէն շատ գտուելուն). Սնիկ (Զմբարային Տանն).

Ճէտոն (կարծր Տանն մի). [Համար). Վաշտափառ, Վաշտեորի.

Ճըս Տաննի. [ohesse). Քարտատանն (Թ. Պերիտոս ըստ Գալիեն).

Մալալի կամ Մալալիի (Փ. Poire du- Քարճին. Քարլենի (Վայրի Տանն).

Ժէ դարու եւրոպացի տեղագիր մի Նախնականայ կողմերում յիշէ Պէկ-արմուտոս
կոչուած կանաչ կլոր քաղցրահամ Տաննը, և կարծէ Թէ անկէ տրուած է յիտալիա
Bergamote անունը, իբրեւ Տանն Բերկամայի:

3919. Տաննէտ.

Բժշկարան մի գրէ Տաննէտի ըստ, և Թ. այլ աւելցընէ՝ Գոռգոս ցոռալի, որ է
Գառնիականն Թ. 428:



2946. Տերեւատ.

Լ. Chamælea, Chamæleon. Փ. Chamélee. Ար. ملازجون, « Մազարիոն, որ
 » Թ. Դուրպիսայ ? սաէ և Հ. Տերեւատ. և ինքն Եթողնեբուն է, և տերեւն նը.
 » ման է Զայթունի տերեւին... և ինքն երկու ցեղ կու լինի, մէկն մեծ և մէկն
 » փոքր, լաւն այն է որ տերեւն մեծ լինի... սպանող է, հէլ տայ և լուանայ...
 » Ասէ Պտ. Թէ ինքն Խաւապանն է, և ինքն երկու ցեղ է, մէկ ցեղն Աշխան
 » է, և ինքն Սպիտակ Մազարիոնն է. և մէկ ցեղն այլ այն է՝ որ գրոցս շինողն
 » տաքեալ է Թէ Դիւրազ Մաքրոն կ'ասեն և Պ. Հաֆթարկա, և իր տերեւն փոքր
 » է. և մէկալլ ցեղն քան զՄրտենու տերեւն մեծ է և Թանձր է, և գոյնն ի
 » դեղնութիւն կու դարնէ. և լաւն այս դեղինն է, և ուժն ի Դիւրպիսին ուժն
 » կու նմանի. և բնութիւնն տաք և շոր է ի դ տրն. և իր առնելուն չափն երկու
 » գանկ է. և Թպտրաս և ապա ի գործ արկանես. և Թպտիրն այս է, որ հանց
 » ի քացախն Թրէս՝ որ սրութիւնն երթայ... Եւ այն որ Սեւ Մազարիոնն է՝
 » չէ աղէկ, իր երկու տրն. սպանող է ու... — Խաւապան ըսածն ինչպէս և Լ.
 » անունն՝ Թ. Χαμαλέων (Գետնաուիծ) բառն է, որ նշանակէ գետնամած կամ
 » ցած բոյս մի, միանգամայն և խայթող. Սեւ և ճերմակ տեսակներն այլ զանա-
 » զանած էին հինք. ետքինս վերոյիշեալ Ար. Խիլիշ կոչուածն է, և Լ. Atractylis
 » gummifera. առաջինն (Սեւն) կոչուի Ար. Պէշքերան ասուատ. Լ. Cardopatum
 » orientale. — Հին Բժշկարանն յիշէ « Հայս Մազարիոնի, որ է Տերեւատն. բայց
 » այնոր տերեւին ծայրն սուր լինի զեղ Զիթենոյ, չինի բոլոր. օգտէ այն ցա-
 » » աւն՝ որ Լուր լինի ժողլիլ ի փորն » — Ուրիշ տեղ գրուած է, « Թ. Զօփ-
 » յէմէ կ'ասէ. երկու թուռլի է. մէկին տերեւն բոլոր է և մէկին սուր՝ զէտ Զի-
 » թենոյ, լաւն այն է ու :

2947. Տերեւիուկ. Թերեւիուկ.

Թ. Κεντάυρειος, յորմէ Լ. Centaurea, Փ. Centaurée, Թ. Бѣлолистникъ. Ար.
 Գանթորիոն ملازجون. Ըստ Ամիրտ. Դանդարիոն, յանուն Քիրոնի ձիա-
 » մարդ բժշկի. ի հետց ի վեր զանազանուած՝ և Երկու ազգ է, ծաղիկ է, մէկն
 » Հաստ և մէկն Բարակ, աղէկն բարակն է ու : Հաստը՝ մեծ կոշուի, Grande Cen-
 » tauree, Ար. Դանդ. Գեպիր, ինչպէս գրէ և Ամիրտ. « Մեծ այլ կ'ասեն և Քա-
 » պիր այլ կ'ասեն, և նման է տերեւն Ընկուզի տերեւին, և խիստ կանանչ
 » կու լինի, և զերդ սղոց ակունի ունի յեղերն. և որձան ի Գառնալեզու կու
 » նմանի, և երկայնութիւնն երկու թիզ է, երեք չորս այլ կու լինի. և ոմանք
 » ասեն թէ երկու կանգուն և երեք կանգուն կու լինի. և զազաթն ի Խաշխաշ
 » կու նմանի, և այլ յերկանկուկ կու լինի. և ծաղիկն ի ծարուր գուն կու նը.
 » մանի. և միզքն ի Սլափրի հունտ կու նմանի, և ի ծաղկին մէջն կու լինի, և
 » տակն հաստ և ամուր կու լինի, և ցիճութիւնն ի լի կու լինի... Ասէ Պտ.
 » Թէ Հա. այս խոտիս Մոռմադոն կ'ասէ, որ է մեծ Ղանդարիոնն, և իր միջքն
 » նման է Հասաքաւանայի, որ է Ասփրին հունտն, և ծաղիկն և վարդն ի բուրդ
 » կու նմանի, և իր քամուքն որպէս արիւն կու նմանի ու — Մոռմադոն՝ ըսածն
 » Թ. Մեղա, Մեղալի՝ մեծ նշանակաւն է, ինչպէս Գալիենու բառից կարգին այլ
 » գրուած կայ, Հ. « Թերեւիուկ, Կենտարիոն մեզս » ուրիշ օրինակ մի յաւելու
 » նոր անուն մ'այլ. « Կենտարիոն, Տերեւիուկ Մեծ, կամ Դանդալիկ » և Հ. կոչուած
 » է եւ Նաշտ: — Փոքրն, Centaurée Petite, Թ. Золотомы сячникъ, « Դանդա-
 » ռիոն Բարակ, որ Ար. Դանդարիոն Տիդադ ? սաէ (Մադիր ملازجون), և ծաղիկն
 » կարմիր է, և տերեւն նման է (Մազապի տերեւին).. տաք է և շոր է և նուրբ

» այնող է. օգտէ Ղդացաութեան, և զգլուխն ի յողէն կու յառակէ, և օգտէ
 » բերնին խոցբուն և ալից ճարապին և ուռէցին, և արին թքնելուն... Ասէ Պա.
 » Թէ Հո. այս խոտիս Տրախտուն կ'աւէ, որ Թարգմանի Բարակ Ղանդարուն. և
 » ոմանք այս խոտիս Մադրուն կ'ասեն (Թուի Μικρόν, փոքր), և ոմանք Մալպա.
 » սխոն կ'ասեն. և իր որձան բարակ լինի, և յերկայնութիւնն մէկ Թիզ լինի.
 » և ծաղիկն հալող է, և տերեւն նման է Մոշկոտամշէնին տերեւին. և տակն
 » փոքր լինի. իսկի օգուտ չունի. և համն խիստ լեղի լինի. և օգտութիւնն ի
 » տերեւն, յորձան և ի ծաղիկն է », եւ այլն:

Տերեփուկք՝ Բուդից ցեղէն են և շատ նման կազմուածով հասարակ խոտեղի-
 նաց կարգէն, մանաւանդ Փոքրն, որ խմբովին մանրիկ վարդազոյն ծաղկներ բերէ
 ի գագաթն. պտուղն երկբաժին պատիճ մ'է, որոյ եզերքի վրայ են հունտերն —
 Որպափ այլ չնչին խոտեր ըլլան հասարակօրէն Տերեփուկք անուանեալքն, բու-
 սաբանք շատ ազգեր և տեսակներ զանազանած են, որոց մէկն այլ Հայկական
 կոչած, C. Armena, տեսնուած ի Բաբերդ, յԵգնկա, ի Պոնտոս. — Տ. Չքնաղ
 C. Pulchella, ի Կարին, Բաբերդ. — C. Margaritacea ի Վրաստան. — C.
 Pergamacea. Խիրասոյ եզերքում Մ. և Փ. Հայոց միջոց. — Տ. Գեղեցիկ, C.
 Bella ի Քութայիս, Պորնոմ. — C. Simplicicaulis ի Թ-Հ. — C. Amœna
 (Չուարճալի) ի Կեսարիա. — C. Serotina ի Տրապիզոն. — Macrocephala ի Սոմ-
 խէթ, Վրաստան. — C. Pyrroboblephara ի Թորթում, Մանիս. — C. Kardu-
 chorum ի Բուժկի-խան Մոկաց. — C. Depressa ի Կարին, Բաբերդ. Ռ-Հ.
 — C. Axillaris achroleuca ի Վրահայս, Գարապաղ, Թեքտաղ. — C. Lanigera
 ի Մնձուր և յԱրիւծ լ. — C. Ovina ի Գեղաբունի. — C. Virgata յԱմիդ,
 Սեւերակ, Այնթապ, Կարին, Բաբերդ. — C. Aggregata, ի Պինկէօլ լ. Լի-
 վանէ. — Scabiosa, յԵգնկա, Մուշ. — C. Carduiformis, ի Կարին, Բաբերդ,
 Կեսարիա. — C. Cynolepis, ի Ռուս Հ. — C. Urvillei ի Մանիս, Պրիս լ. —
 C. Cardunculus ի սահմանն Մէրտինու. — C. Sclerolepis ի Մարաշ, Սեւերակ.
 — C. Kurdica, ի Մուշ, Պոկլան. — C. Fenzlii, Կիւմկիւմ, Պինկէօլ լ. — C.
 Geluensis ի Ճելու լ. — C. Rhizocalathium ի Բերդազրակ. — C. Sessilis ի
 Գեղաբունի, Բաբերդ, Պոնտոս. — C. Ustulata ի Վան, Որմիս, — C. Balsam-
 ita ի Ռուս և Թ-Հ. Դաւրէժ. — C. Babylonica ի Մարաշ, Կիլիկիա. — C.
 Behen ի Մարաշ, Ռ-Հ. — C. Polyrodifolia յԱմիդ, Մէկմանսուր, Մէրտին.
 — C. Szovitsiana ի Նախճաւան. — C. Iberica ի Վրահայս, եւ այլն. Թողող
 դեռ շատ տեսակներ այլ որ յիշուած են ի մօտ սահմանս, ի Փ. Արիս, Կի-
 լիկիս և յԱսորիս — Ինչ յարմարութեամբ, չգիտեմ, ոմանք կ'ըսէ Քալանթա-
 բեան՝ Հարիսթակապիկ ? կոչեն զCentaurea. Լ. Centum՝ 100 նշանակէ:

